«ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ԿՈՄՈՒՆԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԻՍԱՋԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Բաքվի կոմունայի օրոք սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերը դնելու, տարբեր ազգերի բանվորներին ու գյուղացիներին քաղաքականապես լուսավորելու, նրանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու և սովետական իշխանության նվաճումները պաշտպանելու գործում բացառիկ կարևոր դեր էր խաղում բոլշևիկյան պարբերական մամուլը, այդ թվում նաև «Տեղեկատու» թերթը։ Այն Բաքվի բանվորների, զինվորների և նավաստիների սովետի օրգանն էր և հրատարակվեց 1918 թ. ապրիլի 16-ից մինչև հուլիսի 31-ը (84 համար)[1]։ «Տեղեկատուն» ռուսերեն լույս տեսնող «Իզվեստիայի» պատճենը չէր, այլ ուներ ինքնուրույն բնույթ։ «Տեղեկատուն» խմբագրում էր Ա. Միկոյանը։ Թերթին ակտիվորեն աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Ս. Հովսեփյանը, Ա. Ամիրյանը, Գ. Ղազարյանը, Հ. Կարախանյանը, Ա. Կարինյանը, Ս. Դանիելյանը և ուրիշներ։

Թերթի առաջին համարի «Մեր խոսքը» առաջնորդող հոդվածում խմբագրությունը լայն մասսաներին բացատրում էր, որ Ռուսաստանում մղվող քաղաքացիական կռվի օրերին վճռվում է նաև կովկասյան դեմոկրատիայի բախտը՝ անկախ նրա ազգային պատկանելիության փաստից։ Ելնելով ժամանակի հրամայական պահանջից, թերթը սովետների գլխավոր խնդիրներից էր համարում իրենց շուրջը հայ, վրացի, ադրբեջանցի և ռուս բանվորների ու գյուղացիների համախմբումը։ Առաջնորդողը Կովկասի բազմազգ աշխատավորներին կոչ էր անում տեղերում ամրապնդել սովետական իշխանությունը, երկրամասը դարձնել Սովետական Ռուսաստանի անքակտելի մասը։ Թերթը հավատ էր հայտնում, որ գիտակից ադրբեջանցի և հայ բանվորներն ու գյուղացիները բաժանում են իր տեսակետները. «Բաքվի բանվորական սովետը, ոգեվորված քաղաքացիական կռվում հայ և ադրբեջանցի բանվորների ցուցաբերած համերաշխությամբ, ձեռնարկում է այսօրվանից իր «Տեղեկատուի» հայերեն և ադրբեջաներեն հրատարակության՝ լի հավատով, որ կեղեքվող, հարըստահարվող հայ և ադրբեջանցի բանվորական խավերը՝ թոթափելով իրենցից ազգային և դավանական խտրականության լուծը, կդիմեն դեպի կոմունիզմ՝ համայն աշխարհի բանվորության հետ միասին»[2]։

Հավատարիմ իր առաջնորդողում ընտրած քաղաքական գծին, «Տեղեկատուն» հետագա համարներում հանդես է գալիս որպես սովետական իշխանու-

---

1 Նույն ժամանակաշրջանում Բաքվի սովետի «Տեղեկատուներ» են լույս տեսել նաև ռուսերեն և ադրբեջաներեն։

2 «Տեղեկատու», 16. IV. 1918։

թյան ջերմ պաշտպան, անխոնջ կերպով պրոպագանդում Բաքվի կոմունայի քաղաքականությունը, որոշումներն ու միջոցառումները, Սովետական Ռուսաստանի հետ սերտ կապերի պատմական անհրաժեշտությունը, ժողովուրդների ինտերնացիոնալ կապերի ու բարեկամության գաղափարը, լայնորեն լուսաբանում բանվորների ու գյուղացիության կյանքը, գաղափարական անհաշտ պայքար մղում բուրժուական ազգայնականության դեմ, նպաստում ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում աշխատավորության ուժերի մոբիլիզացմանը։

Բաքվում սովետական իշխանության հաղթանակի նշանակությունն ու բանվորների և աշխատավոր գյուղացիության հերթական անելիքները լայն պարզաբանում էին գտել Ա. Միկոյանի «Տարած հաղթությունը և հերթական խնդիրները» հոդվածում։ Հոդվածագիրը պահանջում էր «վճռական քայլերով գնալ Ռուսաստանի խորհուրդների ճամփով ...Միայն այս ուղիով կարելի է ժողովրդի հարստահարված բոլոր խավերը, բոլոր ազգերի աշխատավոր տարրերը եղբայրաբար միացնել և ավելի սերտորեն համախմբել խորհրդի իշխանության շուրջը»[3]։

«Տեղեկատուն» զգալի ուշադրություն էր դարձնում այն նոր խնդիրները մասսաներին բացատրելու գործին, որոնք կանգնած էին նրանց առջև՝ Բաքվի Ժողկոմսովետի ստեղծումից հետո, պրոպագանդում էր Բաքվում սովետական իշխանության՝ որպես ամբողջ Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության առաջին ու միակ պատվարի, ըստ ամենայնի ամրապնդման անհրաժեշտությունը։

«Տեղեկատուն» կարմիր թելի պես անցկացնում էր այն միտքը, որ սովետական իշխանությունը կոչված է փշրելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դարավոր կապանքները և նրանց դարձնելու պատմության կերտողը։ Որպես այդ բանի վառ ապացույց, թերթը շարունակ վկայակոչում էր Սովետական Ռուսաստանի օրինակը։ Սովետական Ռուսաստանը համարելով «հեղափոխության օրրան», թերթը գտնում էր, որ հեղափոխական ոչ մի օրինագիծ չի կարող իրականանալ «մինչև չոչնչանա հակահեղափոխական սեյմը, չտապալվեն ֆեոդալական կարգերը և Անդրկովկասը թե ֆինանսապես, թե տնտեսապես և թե քաղաքական կյանքով չմիանա և չկապվի հեղափոխական և ազատ Ռուսաստանի հետ»[4]։

Երբ Անդրկովկասյան սեյմն ընդունեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու խայտառակ որոշումը, «Տեղեկատուն» այդ առթիվ հանդես եկավ առաջնորդող հոդվածով, բացահայտելով «հանցագործ սեյմի» այդ քայլի աղետաբեր հետևանքը երկրամասի համար։ Թերթը պարզաբանում էր, որ Ռուսաստանից Անդրկովկասի անջատումով երկրամասում փաստորեն կհաստատվեն միջնադարյան կարգեր՝ բանվորական և գյուղացիական մասսաների անծայր շահագործումով, մարդկային տարրական իրավունքների կատարյալ բացակայությամբ։ Հակահեղափոխական այդ ակտը Անդրկովկասը վերածելու էր ազգամիջյան կռիվների թատերաբեմի։ Ուստի, կովկասյան դեմոկրատիայի

---

3 Նույն տեղում,

4 Նույն տեղում, 27. IV. 1918։

առաջնահերթ խնդիրը պետք է լիներ «ապահովելու Անդրկովկասի անարդել առաջնաղացումը դեպի սոցիալիստական հասարակարգ՝ Ռուսաստանի սովետական մեծ հանրապետության հետ միասին»[5]։ Մայիսմեկյան տոնին նվիրված թղթակցության մեջ «անսասան հավատ» էր հայտնվում այն մասին, որ «Ռուսաստանի դեմոկրատիան՝ առանց ազգի խտրության, կհանե երկիրը գրժվար կացությունից»[6]։ Նույն համարում տպագրված էր Բաքվի ժողկոմսովետի դեկլարացիան, որտեղ ասված էր, որ կառավարման տեղական օրգանի ստեղծումը ամենևին չի նշանակում բաժանվել Համառուսաստանյան սովետական Հանրապետությունից, որ Բաքվի ժողկոմսովետն ամենասերտ կերպով կապված կլինի Համառուսաստանյան կենտրոնական կառավարության հետ և, հարմարվելով տեղական պայմաններին, կկենսագործի Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարության՝ ժողկոմսովետի, բոլոր դեկրետներն ու կարգադրությունները։ «Բաքվի ժողովրդական Կոմիսարների սովետի հիմնական խնդիրներից մեկն է լինելու՝ հաստատել որքան հնարավոր է սերտ կապ կենտրոնական իշխանության հետ և Բաքվի բանվորներին ու նահանգի չքավոր գյուղացիությանը որքան հնարավոր է սերտորեն միավորել համայն Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ»[7]։

Սովետական Ռուսաստանի հետ Բաքվում սովետական իշխանության կապերն ամրապնդելու, Անդրկովկասի բախտը նոր Ռուսաստանի հետ կապելու հարցերը թերթը բարձրացրել և լուսաբանել է «Ստեղծված իրադրությունը»[8], «Խաղաղության բանակցությունների վերջը», «Մեր բախտի նախօրյակին»[9], «Բանվորական կյանք»[10], «Մոսկվայից եկած օգնությունը»[11], «Նամակներ Կարմիր բանակի զինվորներին»[12] և այլ հոդվածներում։

«Տեղեկատուն» լայնորեն պրոպագանդում էր Սովետական Ռուսաստանի կողմից Բաքվին ցույց տրվող օգնությունը։ Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի՝ Անդրկովկասի բոլոր ազգություններին ուղղված դիմումի մեջ այդ առթիվ ասված էր. «Այժմ Բաքվի պրոլետարիատին անձնվիրաբար օգնում է Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարությունը, որն ինքը ծանր դժվարություններ է ապրում»[13]։ Տպագրելով նշված դիմումը, թերթը նրա միջոցով աշխատավոր մասսաներին հույս էր ներշնչում, որ Կովկասի ազատության ու սովետական իշխանության համար Անդրկովկասի պրոլետարիատի մղելիք պայքարում նրա հետ են լինելու ռուս բանվորներն ու գյուղացիները. վերջիններիս օգնությամբ, գրում էր թերթը, «մենք կճզմենք մեր թշնամիներին, կալվածատերերին ու բուրժուազիային և կփշրենք մեզ ստրկացնողներին՝ թուրքերին ու գերմանացիներին»[14]։ Թերթը մասսաներին բացատրում էր, որ Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի աշխատավորության ընդհանուր

---

5 Նույն տեղում, 30. IV. 1918։

6 Նույն տեղում, 1. V. 1918։

7 Ս տ. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Երկեր, հ. 3, Երևան, 1958, էջ 157։

8 «Տեղեկատու», 1. VI. 1918։

9 Նույն տեղում, 9. VI. 1918։

10 Նույն տեղում, 13. VI. 1918։

11 Նույն տեղում, 26. VI. 1918։

12 Նույն տեղում, 28. VI. 1918։

13 Ս տ. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Երկեր, հ. 3, էջ 345։

14 Նույն տեղում։

թշնամին տեղի հակահեղափոխական ուժերն են, խաներն ու բեգերը, որոնք գործակցած գերմանա-թուրքական իմպերիալիզմի հետ «ձգտում են գրավել Բաքուն, նրա միակ հարստությունը՝ նավթահանքերը, սովետական հեղափոխական Ռուսաստանին անուղղելի հարված հասցնելու հույսով»[15]։

«Տեղեկատուի» ընթերցողները շարունակ իրազեկ էին դառնում Սովետական Ռուսաստանի ցույց տված օգնության։ Թերթի հուլիսի 24-ի համարում, օրինակ, զետեղված էր «Ռուսաստանից օգնություն» հեռագիրը, ուր նշված էր, որ Մոսկվայից ստացված մթերքները Աստրախանում բեռնվում են և հուլիսի 23-ին հինգ նավերով կուղարկվեն Բաքու[16]։ Հաջորդ համարում թերթն իր ընթերցողներին հայտնում էր, որ հուլիսի 24-ին Աստրախանից Բաքու է ժամանում հեծելազորային մի գումարտակ՝ 4 թնդանոթներով, ռազմամթերքով։ Նույն համարում տպագրված մեկ այլ հեռագիր տեղեկացնում էր, որ հուլիսի 24-ին Աստրախանից Բաքու ճանապարհվեց 300 հոգուց բաղկացած հեծելազորը[17]։

Սովետական Ռուսաստանի ցույց տված օգնության լուսաբանումը ուներ քաղաքական կարևոր նշանակություն։ Այն ի չիք էր դարձնում հակահեղափոխական կուսակցությունների հակասովետական պրոպագանդան, մասսաների մեջ էլ ավելի էր խորացնում Սովետական Ռուսաստանի նկատմամբ ունեցած սերն ու համակրանքը, նրանց հավատ ու հույս էր ներշնչում իրենց պայքարի հաղթանակի հանդեպ։

Պրոպագանդելով և մասսայականացնելով Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի որոշումները, «Տեղեկատուն» նպաստում էր դրանց կենսագործմանը։ Այսպես, թերթի մայիսի 1-ի համարում հրապարակված էր Բաքվի ժողկոմսովետի դեկլարացիան, իսկ հաջորդում՝ այդ դեկլարացիային նվիրված ընդարձակ առաջնորդող հոդվածը։ Համոզիչ փաստերով թերթը մեկնաբանում էր դեկլարացիայի բովանդակությունը, նշում այն հսկայական խնդիրները, որ կանգնած էին աշխատավոր մասսաների առաջ՝ դեկլարացիայում առաջադրված հարցերի կենսագործմանը ակտիվորեն նպաստելու համար։ Ժողկոմսովետի ծրագրած բարեփոխումները կյանքի կոչելու համար, ընդգծում էր թերթը, հարկավոր է դիտակից բանվորների գործուն աջակցությունը. յուրաքանչյուր գիտակից բանվոր, յուրաքանչյուր ազնիվ քաղաքացի, որ ապրում է մայր-հայրենիքի փայլուն ապագայի խոհերով, պետք է ուժերի և ընդունակության չափով՝ և՛ խոսքով, և՛ գործով օգնի ժողկոմսովետին՝ վերջինիս դրժվարին գործունեության մեջ։ «Մեր պարտականությունն է,— կարդում ենք առաջնորդողում,— նպաստել կոմիսարների խորհրդին հաջողությամբ կատարելու հասարակական վերաշինության այն գործը, որին նա որոշել է նվիրել իր եռանդը, մտքի ուժը և ժողովրդին ծառայելու ջերմ ցանկությունը»[18]։

1918 թ. հուլիսի 9-ի համարում «Տեղեկատուն» տպագրել էր Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետի դիմումը Անդրկովկասի բոլոր ազգություններին։ Դիմումում նշվում է, որ սեյմում նստած մուսուլմանական բեկերն ու խաները, վրացական իշխաններն ու ազնվականները և հայկական

15 «Տեղեկատու», 10. VII. 1918։
16 Նույն տեղում, 24. VII. 1918։
17 Նույն տեղում, 25. VII. 1918։
18 Նույն տեղում, 3. V. 1918։

բուրժուազիայի սպասարկուները, բանվորների ու գյուղացիների կամքին հակառակ, երկրամասը վաճառել են թուրքերին ու գերմանացիներին։ Դեմումի մեջ այն հաստատ համոզմունքն էր հայտնվում, որ եթե Անդրկովկասի բոլոր ադրբեջանցիները, հայերը, վրացիները, ռուսները «միանան առանց ազգի խտրության, ստեղծեն բանվորների ու գյուղացիների Սովետներ, ապա կարելի է խեղդել բեկերին, իշխաններին ու հայ հարուստներին։ Մենք կքշենք մեր երկրից թուրքական փաշաներին ու գերմանական բռնադատիչներին»[19]։

«Տեղեկատուն» հետևողականորեն հանդես է գալիս որպես ժողովուրդների ինտերնացիոնալ կապերի և բարեկամության պրոպագանդիստ, հրապարակում էր բանվորների, զինվորների և գյուղացիների միտինգների ու ժողովների մասին ինֆորմացիաներ, գրանցում ընդունված բանաձևերը, որոնց միջոցով մասսաները ջերմ հավանություն էին տալիս սովետական իշխանության քաղաքականությանը, նրա ձեռնարկած սոցիալիստական միջոցառումներին և պատրաստակամություն էին հայտնում բոլոր ազգերի աշխատավորների հետ ձեռք-ձեռքի տված պայքարելու սովետական իշխանության նվաճումների պաշտպանության և ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ամրապնդման համար։ Այսպես, օրինակ, մայիսի 5-ի համարում թերթը մանրամասն հաղորդագրություն էր զետեղել մայիսի 1-ին Բաքվի Թազա-փիր մզկիթում ադրբեջանական սոցիալիստական բյուրոյի նախաձեռնությամբ հրավիրված բազմամարդ միտինգի մասին։ Թերթը տպագրել էր միտինգում Ն. Նարիմանովի ունեցած ելույթը, որտեղ ասված էր, որ ադրբեջանական աշխատավորության «միակ անկեղծ բարեկամները միայն սոցիալիստներն են» և հավաքված բազմությանը կոչ էր արված՝ «չլսել զանազան պրովոկատորների թելադրանքներին և համախմբվել Բաքվի սովետական իշխանության շուրջը և նպաստել նրան իր գործունեության մեջ»[20]։ Թերթում զետեղված էր նաև Բաքվի ժողկոմսովետի հողագործության կոմիսար Մ. Վեզիրովի ելույթը, ուր փաստերով ապացուցվում էր, որ սովետական իշխանության դեմ կազմակերպված բոլոր խռովությունների ամբողջ պատասխանատվությունն ընկնում է վերնախավերի վրա, որոնք «նիկոլայ ցարի ռեժիմի հլու սպասավորներն էին»։ Թերթը տպագրել էր նաև միտինգում հանդես եկած ադրբեջանցի մի ուսանողի ելույթը, որը «դրվատեց ժողովուրդների եղբայրության մեծ գաղափարը և հորդորեց ներկա եղողներին՝ ընթանալ դեպի լավագույն հասարակական կարգեր՝ կովկասյան, համայն Ռուսաստանի և ողջ աշխարհի աշխատավորության հետ ձեռք-ձեռքի տված։ Ընկերոջ ճառը սքանչելի տպավորություն գործեց հավաքվածների վրա։

Միտինգին ներկա էին մոտավորապես 800—1000 հոգի, որոնք ցրվեցին տուն գոհ տրամադրությամբ»[21]։

«Տեղեկատուն» պատշաճ տեղ էր տալիս նաև զինվորների հեղափոխական-ինտերնացիոնալ տրամադրությունների արտացոլմանը։ Այսպես, «Նուխեցի զինվորները կողմնակից են խորհրդային իշխանությանը և դեմ՝ ազգային խորհրդին» վերնագրով հոդվածում ասված էր, որ Նուխիի գավառի հայ զինվորները, շուրջ 200 հոգի, իրենց ընդհանուր ժողովում լսելով ընկ. Ա. Մի-

---

19 Ս ա ռ. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Երկեր, հ. 3, էջ 344։

20 «Տեղեկատու», 5. V. 1918։

21 Նույն տեղում։

կոյանի զեկուցումն ընթացիկ մոմենտի մասին, միաձայն ընդունեցին հետևյալ բանաձևը. «Խորհրդային իշխանության ամրացման և բոլոր ազգ[եր]ի բանվորների ու գյուղացիների եղբայրական համերաշխություն հաստատելու և բոլոր ազգի բուրժուազիայի դեմ հաջող կռվելու համար անհրաժեշտ ենք համարում արձակել բոլոր ազգային խորհուրդները, որոնք գործիք հանդիսանալով ազգային բուրժուազիայի իշխանության տակ՝ հակադրվելով մյուս ազգի աշխատավոր մարդերին, և ձգտում են՝ թուլացնելով միջազգային աշխատավորական խորհրդային իշխանությունը՝ իրենց ձեռքն առնել քաղաքական իշխանությունը մի ազգի սահմաններում»[22]։

Զինվորները միաժամանակ հայտարարել էին, որ սովետական իշխանության, Բաքվի Ժողկոմսովետի դրոշը միջազգային կոմունիզմի դրոշն է, և խոստացել բարձր ու անաղարտ պահել այն՝ պայքար մղելով բոլոր ազգությունների տիրող դասակարգերի դեմ։ Նրանք կոչ էին անում բոլոր աշխատավոր գյուղացիներին՝ Բաքվի Ժողկոմսովետի իշխանության ենթակայության տակ «կազմակերպել գյուղացիական խորհուրդներ, խլել հողը բեկերից, վերականգնել հեղափոխական կարգը և կանոնավորել քայքայված գյուղական կյանքը»։ Այսօրինակ նյութերի միջոցով թերթը ժողովրդի ամենալայն խավերին էր հասցնում զինվորների հեղափոխական խոսքը, տրամագրությունները։

«Ադրբեջանցի գյուղացիներն ընդունում են խորհրդի իշխանությունը»— այս վերնագիրն է կրում թերթի համարներից մեկի «Գյուղացիական կյանք» բաժնում տպագրված բանաձևը, որն ընդունել էին Բաքվի նահանգի Շամախու գավառի Մելգամ գյուղի բնակիչները։ Բանաձևում ասված էր, որ աշխատավոր գյուղացիները որոշել են անցնել սովետական իշխանության կողմը, պայքարել բոլոր բեկերի՝ որպես ազգամիջյան ընդհարումների մեղավորների դեմ, եղբայրական ձեռք մեկնել հայ և ռուս գյուղացիներին, իրենց ունեցած զենքն ու զինամթերքը հանձնել սովետական իշխանությանը[23]։

Մայիսի 23-ի համարում «Տեղեկատուն» հանգամանորեն լուսաբանում էր Բաքվի գավառի գյուղացիական դեպուտատների սովետների համագումարի աշխատանքները։ Այդ առթիվ հրատարակված նյութերում զգալի տեղ էր տրված բանվորների և աշխատավոր գյուղացիության միջև բարեկամական կապերն ամրապնդելու, գյուղացիական զանգվածներին քաղաքական կյանքի մեջ ներգրավելու, սովետական իշխանության շուրջը համախմբելու հարցերին։ Համագումարի բացման կապակցությամբ տրված խմբագրական հաղորդման մեջ ընդգծված էր, որ համագումարը պետք է նպաստի ադրբեջանական աշխատավորության քաղաքական դաստիարակության գործին. դա «այնքան կարևոր է կովկասյան ազգերի խաղաղ զարգացումն ապահովելու տեսակետից, որ այդ ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր քայլ պետք է ողջունել»[24]։ Ելնելով ժամանակի պահանջներից, թերթը քաղաքական հույժ կարևոր նշանակություն էր տալիս ադրբեջանցի աշխատավոր գյուղացիության ներկայացուցիչների առաջին համագումարին, որը պետք է դառնար մի նոր շրջանի սկիզբ կովկասյան իրականության մեջ և իրական պայմաններ ստեղծեր կով-

22 Նույն տեղում, 1. V. 1918։
23 Նույն տեղում։
24 Նույն տեղում, 28. V. 1918։

կասյան բազմազգ դեմոկրատիայի համերաշխ պայքարի համար՝ ընդդեմ շահագործողների։

Գյուղացիական դեպուտատների սովետների վերոհիշյալ համագումարում ելույթ ունեցավ Բաքվի ժողկոմսովետի նախագահ Ստ. Շահումյանը։ Նա հանդիմանալից վերլուծեց Անդրկովկասում և, մասնավորապես, Բաքվում ստեղծված քաղաքական իրադրությունը ու համագումարի ուշադրությունը հրավիրեց ընդհանուր թշնամիների դեմ մղվող պայքարում աշխատավոր գյուղացիությանը ներգրավելու և Անդրկովկասում բանվորների ու գյուղացիների միասնական կառավարություն ստեղծելու խնդիրներին[25]։

Ստ. Շահումյանը նշեց, որ «բոլոր գավառներում հայ և մուսուլման գյուղացիների միշև լիակատար միասնություն է նկատվում, նրանք գիտակցում են, որ իրենց ընդհանուր թշնամին կալվածատերերն են։ ...Գյուղացիներն ինքնին, ինչ ազգության էլ որ պատկանեն, չեն կարող թշնամաբար վերաբերվել միմյանց, որովհետև ունեն ընդհանուր շահեր, ընդհանուր թշնամիներ»[26]։

Իր էջերում լայն տեղ տալով բանվորա-գյուղացիական համագումարների, միտինգների ընդունած բանաձևերի, նշանավոր հեղափոխական գործիչներ Ստ. Շահումյանի, Ա. Միկոյանի, Ն. Նարիմանովի և մյուսների ելույթների ու հոդվածների պրոպագանդմանը, «Տեղեկատուն» դրանով զգալի ծառայություն էր մատուցում Անդրկովկասի բազմազգ աշխատավորության քաղաքական և ինտերնացիոնալ դաստիարակության գործին։

Գյուղացիության քաղաքական ակտիվության աճի, հայ և ադրբեջանցի գյուղացիների բարեկամական կապերի մասին էր խոսվում նաև «Տեղեկատուի» № 10-ում հրապարակված նամակը, որի հեղինակ հայ բանվոր Անդրեասը 1917 թ. ամռանն ու աշնանը հեղափոխական աշխատանք էր կատարել Գանձակի նահանգում։ «Բանվորական նամակներ» խորագրի տակ տպագրված այդ նյութի հեղինակը հավաստում էր այն համակրանքն ու վստահությունը, որ տածում էր Ջիվանշիրի գավառի ադրբեջանական գյուղացիությունը դեպի հայ գյուղացիությունն ու հայ հեղափոխական մտավորականությունը[27]։

«Տեղեկատուն» օգտագործում է ամեն մի առիթ, ցույց տալու համար, թե տարբեր ազգերի պատկանող աշխատավորները օրհասական պահերին ինչպես էին օգնության ձեռք մեկնում իրար՝ հաճախ վտանգելով սեփական կյանքը։ Աշխատավորների ինտերնացիոնալ բարեկամությունը իր հաստատումն էր գտնում այն նամակներում, որոնք հաճախ տպագրում էր «Տեղեկատուն»։ Ահա այդ նամակներից մեկը, որի հեղինակը հայ գաղթականներն էին.

«Քաղաքացի խմբագիր.

Խնդրում ենք տեղ տալ Ձեր թերթում հետևյալ երկտողին։ Մենք, ներքոստորագրողներս, որ ապրում ենք Սատթարովների տանը, Սուրախանում, մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում նրանց, որ քաղաքացիական կռվի ժամանակ մեզ իրենց կյանքի գնով պահպանեցին։ Նրանք գաղթականներին ապաստան ու կերակուր տվեցին ամենակրիտիկական րոպեներին, առանց ազգի խտրության»[28]։

---

25 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 208։

26 Նույն տեղում, էջ 209։

27 «Տեղեկատուն», 14. V. 1918։

28 Նույն տեղում, 1. V. 1918։

«Տեղեկատուի» խմբագրությունը ժողովուրդների բարեկամության թեման լայնորեն պրոպագանդելու նպատակով իր ընթերցողներին ծանոթացնում էր նաև բոլշևիկյան մյուս պարբերականներում այդ հարցի շուրջ լույս տեսած նյութերին, օրինակ, № 7-ում «Մամուլ» խորագրի տակ հաղորդելով այն մասին, որ արդեն լույս են տեսել ադրբեջաներեն «Տեղեկատուի» չորս համարները, թերթը ընդարձակ մեջբերումներ էր կատարում նրա առաջին երեք համարներում լույս տեսած Խ. Զեյնալլիի «Կովկասի քաղաքական կյանքը» վերնագրով հոդվածից, որտեղ հեղինակը խոսելով հայ և ադրբեջանական գյուղացիության միմյանց հանդեպ ունեցած բարյացակամության մասին, գրում էր. «Դիտեցեք հայ կամ ադրբեջանցի գյուղացու կենցաղը և դուք կգտնեք շատ նման գծեր նրանց մեջ՝ նույն սերը դեպի իր արտը, դեպի իր չարքաշ աշխատանքը, նույն խնամքոտ վերաբերմունքը դեպի իր լծկանն ու կթանը, նույն բարյացակամ վերաբերմունքը դեպի իր հարևանը և, վերջապես, նույն շահագործումը խանների ու բեկերի կողմից։ Որքան քաղցրություն և հմայք կա այն «ղոնշի» («հարևան») բառի մեջ, որով դիմում են իրար հայ և ադրբեջանցի աշխատավորները, հողի մշակները, որոնց ամբողջ կյանքը թափանցված է փոխադարձ սիրով դեպի իրար և իրար օգնելու ջերմ ցանկությամբ»[29]։ Խ. Զեյնալլին դրվատում է նաև հայ և ադրբեջանցի բանվորների ինտերնացիոնալ բարեկամությունը. «Բանվորները՝ հայ և ադրբեջանցի, համերաշխ կերպով են ապրում, եղբայրական ընկերական զգացումներով են իրար մոտենում, որովհետև նրանց շահագործող կապիտալիստը հավասարապես շահագործում է թե՛ ադրբեջանցի, և թե՛ հայ բանվորին՝ ամենևին տարբերություն չգնելով նրանց շահագործման ձևի մեջ»[30]։

Հակահեղափոխական ուժերի մերկացումը, նրանց դեմ կոմունայի մղած հերոսական պայքարի արտացոլումը այն կարևոր խնդիրներից էին, որոնց թերթը քաղաքական մեծ նշանակություն էր տալիս իր առաջին իսկ համարներից սկսած։ «Տարած հաղթությունը և հերթական խնդիրները» ծավալուն հոդվածում, ըստ ամենայնի վերլուծելով Բաքվի բանվորական սովետի տարած հաղթանակը բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխության նկատմամբ, հոդվածագիրը ընդգծում էր, որ Բաքվում հակահեղափոխության դեմ տարած հաղթանակներն ընդհանրապես «համակովկասյան նշանակություն» ունեն[31]։ Միաժամանակ թերթը մասսաներին պարզաբանում էր Բաքվի սովետական իշխանության հետագա խնդիրները, շեշտելով այն կարևոր իրողությունը. թե հակահեղափոխական ուժերի դեմ պայքարը ավարտված չէ, ուստի անհրաժեշտ է «շարունակել ու գուցե և ընդլայնել եռանդուն պայքարը Բաքվի մոտ և այն կողմ բուն դրած հակահեղափոխության դեմ»։ Հակահեղափոխական հիդրայի գլուխը վերջնականապես ջախջախված և ամեն մի վտանգ վերացված կլինի միայն այն դեպքում, երբ «մենք հիմնահատակ անելով կազմակերպված և ժողովրդական մասսաների խաբված տարրերի վրա հենվող հակահեղափոխության կենտրոնները՝ միաժամանակ կկազմակերպենք և կազմակերպչորեն կհակադրենք նրան ամեն աղգի բոլոր աշխատավոր մասսաները ինչպես Բաքվի ներսում, այնպես էլ դրսում»[32]։

---

29 Նույն տեղում, 22. IV. 1918։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, 16. IV. 1918։

32 Նույն տեղում։

Բաքվում սովետական իշխանության պաշտպանության և հակահեղափոխության դեմ պայքարի հարցերը՝ որպես կենսական կարևոր խնդիրներ, թերթը պարզաբանում էր տարբեր տեսանկյուններով։ «Տեղեկատուն» իրավացիորեն գտնում էր, որ արտաքին հակահեղափոխության դեմ կռվելու համար պետք է «Անդրկովկասը պատել սովետական իշխանության ցանցով և այն համարել Սովետական Ռուսաստանի մի մասը»[33]։ Թերթը փաստալից հոդվածներ ու հաղորդումներ էր տպագրում ներքին և արտաքին թշնամիների դեմ Բաքվի պրոլետարիատի, նրա կարմիր գվարդիայի մղած հերոսական պայքարի դրվագների մասին։ Մերկացնելով «Թուրքական ֆեոդալիզմի կովկասյան գործակալ «Մուսավաթ» կուսակցության»[34] հակահեղափոխական ճիգերը, «Տեղեկատուն» բացատրում էր, որ «մեր կռվով մենք պետք է ցույց տանք, որ իսկապես խորհուրդների զորքերը կռվում են բեկերի և նրանց ղինված բանդաների դեմ՝ աղքատ գյուղացիների պաշտպանության համար»[35]։ Տալով Անդրկովկասում հակահեղափոխական ուժերի կործանարար քաղաքականության պատճառով ստեղծված իրադրության պատկերը, «Տեղեկատուն» գրում էր. «Անդրկովկասյան իրականությունը նման է հրաբխի, որ կարող է պայթել յուրաքանչյուր րոպե, յուրաքանչյուր ժամ, և հիմնովին փոխել Անդրկովկասում գոյություն ստացած կարգերը»[36]։

1918 թ. ամռանը Բաքվում դրությունը գնալով ծանրացավ։ Հակահեղափոխական ուժերը ձգտում էին իրականացնել իրենց դավաճանական մտադրությունը՝ Բաքու հրավիրել անգլիական ինտերվենտներին։ «Տեղեկատուն» իր վճռական բողոքի ձայնն է բարձրացնում հակասովետական կուսակցությունների այդ դավաճանական քայլի դեմ, կուսակցություններ, որոնք աշխատում էին պառակտել աշխատավոր մասսաներին և նրանց ոտքի հանել սովետական իշխանության դեմ, խորտակել սովետական իշխանությունը և հաստատել անգլիացիների ու բուրժուաների տիրապետությունը[37]։

Բաքվի սովետում բուն գրած հակահեղափոխականների դավաճանական քաղաքականության հետևանքով 1918 թ. հուլիսի 25-ին որոշում կայացվեց Բաքու հրավիրել անգլիացիներին։ «Տեղեկատուն» այդ կապակցությամբ նշեց, որ հակահեղափոխության տարրերը ժամանակավորապես հաղթանակ տարան՝ «հենված միջազգային իմպերիալիզմի, այս դեպքում «դաշնակից» անգլո-ֆրանսիական կապիտալիզմի ուժի վրա»[38]։ «Դավաճանություն» վերնագրով հոդվածում թերթը մատնանշում էր, որ «ռուսական հեղափոխության պատմության մեջ իր եզակի տեղը կգրավի այդ դավաճան և հակահեղափոխական որոշումը»։ Այս առիթով ևս մերկացնելով դաշնակցականների ստոր դերը, թերթը գրում էր. «դաշնակցությունը ծախեց հայ աշխատավորությանը Անգլիային՝ հաստատելու նորից կապիտալիստների տիրապետությունը այստեղ և

---

33 Նույն տեղում, 28. IV. 1918։

34 Նույն տեղում, 5. VII. 1918։

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում, 7. VII. 1918։

37 Նույն տեղում, 19. V. 1918։

38 Նույն տեղում, 27. VII. 1918։

հայ ազատագրված աշխատավորությանը ստրկացներու. սա արևի լույսի նման մի ճշմարտություն է։ ...Կատարածի մասին մենք դաշնակցությանը ոչինչ ասելու բան չունենք, որովհետև աշխատավորությունը ինքը կասե մի օր... թե այդ ինչ ոճրագործություն է հայ դեմոկրատիային կտրել հեղափոխական Ռուսաստանից և ստրկացրել Անգլիային»[39]։

Հուլիսի 30-ին «Տեղեկատուն» տպագրեց Բաքվի սովետի դեպուտատների գործադիր կոմիտեի կոչը, որտեղ վերլուծելով ստեղծված իրադրությունը, ի գիտություն Բաքվի բնակիչների, հայտնվում էր, որ գործադիր կոմիտեն իր ամբողջ կազմով շարունակում է բանվորա-գյուղացիական սովետական իշխանության պաշտպանը հանդիսանալ և դիմում է զորամասերին, նավաստիներին, բանվորներին և բոլոր նրանց. ում համար թանկ է սովետական իշխանությունը՝ «արթուն լինել և երկաթե օղակով համախմբվել սովետի շուրջը՝ այս ծանր և ճակատագրական մոմենտում հարված տալու գլուխ բարձրացնել համարձակվողներին և արժանավոր կերպով հանդիպելու մեզ վրա շարժվող հանդուգն թշնամուն»[40]։

«Թուրքական վտանգը» առաջնորդողում թերթը հանգամանալից վերլուծում էր սեյմի դավաճանական քաղաքականության պատճառով ռազմաճակատում ստեղծված վիճակը, երկրամասի ներքին դրությունը, պահանջում էր եռանդուն կերպով պատրաստվել՝ ետ մղելու առաջխաղացող թշնամական զորքերը։ Առաջնորդողը ի լուր մասսաների հայտնում էր, որ «Մենք մենակ չենք լինի այդ կռվում. մեզ հետ է հայկական, ադրբեջանական, վրացական դեմոկրատիայի համակրանքը։ Ռուսաստանի սովետական իշխանությունը չի հապաղի մեզ օգնության հասնել և հյուսիսից եկած Ռուսական բանակները կազատեն Կովկասը նրան սպառնացող վտանգից»։ «Տեղեկատուն» կոչ էր անում այս հավատով դիմագրավել թշնամուն և երկիրը փրկել վտանգից[41]։ Բանվորներին, նավաստիներին և Կարմիր բանակի զինվորներին ուղղած հատուկ կոչով թերթը խորհուրդ էր տալիս չենթարկվել հեղափոխության թշնամիների՝ «օտարերկրյա կապիտալի ստոր գործակալների» պրովոկացիոն ելույթներին, հիշեցնելով, որ անգլիացիները Մուրմանսկում կռվում են սովետական զորքերի դեմ և գնդակահարում սովետների անդամներին, հեղափոխական բանվորներին[42]։

Այսպիսով, Բաքվի սովետի մարտական օրգան «Տեղեկատուն», ի թիվս բոլշևիկյան մյուս պարբերականների, պատվով էր կատարում, Վ. Ի. Լենինի պատկերավոր արտահայտությամբ, կոլեկտիվ պրոպագանդիստի, ագիտատորի ու կազմակերպչի իր դերը, բարձր պահելով ժողովուրդների բարեկամության ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, կոչ անելով Կովկասի բազմազգ բանվորներին ու աշխատավոր գյուղացիությանը՝ այդ դրոշի ներքո պայքարել տիրող դասակարգի դեմ, հանուն սովետական իշխանության, հանուն սոցիալիզմի գաղափարների հաղթանակի։

---

39 Նույն տեղում, 28. VII. 1918։

40 Նույն տեղում, 30. VII. 1918։

41 Նույն տեղում, 10. V. 1918։

42 Նույն տեղում, 24. VII. 1918։

«ТЕХЕКАТУ» В БОРЬБЕ ЗА ЗАЩИТУ КОММУНЫ

ИСАДЖАН МИНАСЯН

Резюме

Большевистская газета «Техекату» была органом Бакинского Совета. Она издавалась в Баку с 16 апреля по 31 июля 1918 г. на армянском языке. Всего вышло 84 номера. Редактором газеты был А. И. Микоян. В газете активно сотрудничали С. Шаумян, С. Овсепян, А. Амирян, О. Караханян, Г. Казарян, А. Каринян, С. Даниелян и другие деятели Бакинской коммуны.

Газета «Техекату» сыграла большую роль в деле пропаганды политики, решений и мероприятий Бакинской коммуны, дружбы с Советской Россией, борьбы против буржуазного национализма, контрреволюционных сил. Газета проделала также огромную работу в деле мобилизации масс на борьбу против иностранных оккупантов, за создание основ социалистической экономики, в политическом просвещении рабочих и крестьян разных национальностей, в претворении в жизнь коренных мероприятий Советской власти в Баку.

Газета уделяла большое внимание вопросам коммунистического воспитания трудящихся масс, дружбы народов и пролетарского интернационализма.